ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

27 ՄԱՐՏԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 78-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԵՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,22842 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Սերս բնակավայրում գտնվող, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,22842 հա մակերեսով գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասը ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք,գյուղ Սերս, 3-րդ փողոց, 17/1 հողամաս, և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20244JQ5ZR):
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

28 ՄԱՐՏԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 79-Ա

«ՄԱՐՏԻՐՈՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՋԱՌԻԹԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 23.04.2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, Ջառիթափի համայնքապետարանի և «Մարտիրոս» բարեգործական հիմնադրամի 2018 թվականի ապրիլի 23-ին կնքված՝ գույքի վարձակալության պայմանագրի , հաշվի առնելով բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի, «Մարտիրոս» բարեգործական հիմնադրամի և Վայոց ձորի մարզի Ջառիթափի համայնքապետարանի միջև 2018թ. հունիսի 26-ին կնքված բնության պահպանության միջոցառումների դրամաշնորհային համաձայնագրի լուծման վերաբերյալ համաձայնագիրը և լիազորված անձ Ս. Սոսյանի դիմումը (մտից N U-109, 16.11.2023 թ.).

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Սույն թվականի մարտի 28-ից երկկողմանի համաձայնությամբ լուծել Ջառիթափի համայնքապետարանի և «Մարտիրոս» բարեգործական հիմնադրամի միջև 2018թ. ապրիլի 23-ին կնքված Սարավան և Արտավան բնակավայրերում գտնվող հողամասերի վարձակալության N 332, 334 և 338 պայմանագրերը՝ (11,35589 հա մակերես Արտավանում և 89,189 հա մակերես Սարավանում):
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

01 ԱՊՐԻԼԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 80-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25.01.2024Թ-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ն մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 25.01.2024 թվականի թիվ 14-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1 Որոշման վերնագրում «0,01002 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ» բառերի փոխարեն գրել «0,004318 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:
1.2 Որոշման բովանդակության 1-ին կետում «0,01002 հա բնակելի կառուցապատման» բառերի փոխարեն գրել «0,004318 հա բնակելի կառուցապատման» բառերը և «72.44 քմ մակերեսով» բառերի փոխարեն գրել «55.61 քմ մակերեսով» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

01 ԱՊՐԻԼԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 81-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00160 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,00160 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0004-0332 կադաստրային ծածկագրով հողամասը, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ա.Մելիքյան փողոց, 17/1 հողամաս և ներկայացնել իրավունքի պետական վերագրանցման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024UCHGBP):
2.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3.Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

02 ԱՊՐԻԼԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 82-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլխի 35-րդ կետով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքին սեփականության իրավունքով պատկանող, առանձին միավոր հանդիսացող, Վայք համայնքի Մարտիրոս գյուղի 1-ին փողոց, 1-ին նրբանցք 2/1 հասցեում գտնվող, 0.375 հա մակերեսով /ծածկագիր՝ 10-033-0006-0024/ և Վայք համայնքի Մարտիրոս գյուղի 1-ին փողոց, 1-ին նրբանցք 2 մշակույթի տուն հասցեում գտնվող, 0,325 հա մակերեսով /ծածկագիր՝ 10-033-0006-0005/ գույքերը միավորել և ճանաչել մեկ միավոր:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված մեկ միավոր հանդիսացող գույքը հասցեավորել՝ որպես Վայք համայնք, գյուղ Մարտիրոս, 1-ին փողոց, 1-ին նրբանցք 2 մշակույթի տուն:
3. Դիմել ՀՀ Կադաստրային կոմիտե սույն որոշման առաջին կետում նշված գույքի նկատմամբ պետական գրանցում կատարելու և Կադաստրային քարտեզում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

03 ԱՊՐԻԼԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 83-Ա

ԷՄԻՆ ԱՐԳԱՄԻ ԵՆՈՔՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլխի 35-րդ կետով և 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշմամբ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Էմին Արգամի Ենոքյանին սեփականության իրավունքով պատկանող, առանձին միավոր հանդիսացող, Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի, 45/7 հասցեում գտնվող, 0.04143 հա մակերեսով /ծածկագիր՝ 10-003-0010-0006/ և Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի, 45/9 հասցեում գտնվող, 0.03869 հա մակերեսով /ծածկագիր՝ 10-003-0010-0005/ հողամասերը միավորել և ճանաչել մեկ միավոր:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված մեկ միավոր հանդիսացող հողամասը հասցեավորել՝ որպես Վայք համայնք Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի, 45/9 հողամաս:
3. Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի, 45/9 հասցեում գտնվող Էմին Ենոքյանին սեփականության իրավունքով պատկանող, 10-003-0010-0005 կադաստրային ծածկագրով, 0,08012 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխել՝ դարձնելով հասարակական կառուցապատման:
4. Դիմել ՀՀ Կադաստրային կոմիտե սույն որոշման մեջ նշված գույքի նկատմամբ պետական գրանցում կատարելու և Կադաստրային քարտեզում ուղղում կատարելու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

03 ԱՊՐԻԼԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 84-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 462 - Նորոշումներն ուժը կորցրած ճանաչելու եվ 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Ս.Շահումյան փողոց, 99/3 ավտոտնակ հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող շինությունը 55.8 քմ ընդհանուր մակերեսով՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0,00295 հա մակերեսով հողատարածքով, գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղ. Կարինե Արշավիրի Վարդանյանին ՝ շինության համար՝ 79 350 /55.8 x 1422/ (յոթանասունինը հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ և հողատարածքի համար՝ 55 400 /29.5x1877.7/ (հիսունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ արժեքով:
2.Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

04 ԱՊՐԻԼԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 85-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային և պետական սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի վարձակալության տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից ներկայացված ներքոհիշյալ հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով հայտարարել մրցույթ, մրցույթի օր նշանակել սույն թվականի մայիսի 6-ը:
ա/ Վայք քաղաքում գտնվող 10-003-0002-0231 կադաստրային ծածկագրով, 0.25162 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը.
բ/ Փոռ բնակավայրի տարածքում գտնվող 10-043-0122-0041 կադաստրային ծածկագրով, 1.84771 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր հողատեսքով հողամասը.
գ/Զառիթափ բնակավայրի տարածքում գտնվող 10-022-0218-0126 կադաստրային ծածկագրով, 0.05825 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր հողատեսքով հողամասը.
դ/ Զառիթափ բնակավայրի տարածքում գտնվող 10-022-0218-0124 և 10-022-0218-0125 կադաստրային ծածկագրերով, 1.19704 հա և 0.80549 հա մակերեսներով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր հողատեսքով հողամասերը.
2. Հաստատել վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված
Համայնքի ղեկավարի 04.04.2024 թ-ի
Թիվ 85-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վայքի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփ. հանդիսացող հողամասերի վարձակալության և կառուցապատման մրցույթ՝

ԼՈՏ **1**. Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպ. նշանակության հողամասը /ծածկ՝10-003-0002-0231/, 0.25162 հա , տարեկան վարձավճար՝ 40 000 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ **2**. Փոռ բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, արոտավայրը /ծածկ՝10-043-0122-0041/, 1.84771 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 15 000 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ **3** Զառիթափ բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, արոտավայրը /ծածկ՝10-022-0218-0126/, 0.05825 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 1000 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ **4** Զառիթափ բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, արոտավայրերը /ծածկ՝10-022-0218-0124 և 10-022-0218-0125/, 1.19704 հա և 0.80549հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 14 000 և 9000 ՀՀ դրամ (25 տարով):

Մրցույթը տեղի կունենա 2024թ. մայիսի 6-ին ժամը 11:00-ին Վայքի համայնքապետարանի շենքում: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, 15 000 դրամի չափով վճարման անդորրագիր, անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթեր: Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի կայացման օրվանից 3 օր առաջ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Վայքի համայնքապետարան /հեռ. 098 992894/: